ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՍԱՐՔԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՈԳՀ ԾՁԲ-ԱԻՆ-18/26

ք.Երևան «11» 05 2018թ.

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարությունը ի դեմս աշխատակազմի ղեկավար Գ.Հայրապետյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Մատակարար.ԱՄՎ»ՍՊԸ-ն,ի դեմս տնօրեն Վ.Թումասյանի,որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա,այսուհետ «Վաճառող» մյուս կողմից,կնքեցին սույն պայմանագիրը հետևյալ մասին:

1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1Պատվիրատուն հանձնարարում է,իսկ Կատարողը ստանձնում է համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N1հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N1հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2.ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1Տանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետև պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը,ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ)Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտել նէական է համարվում,եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N1հավելվածով սահմանված պահանջներին,

բ)խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը. իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները,իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3Կատարողն իրավունք ունի՝

2.3.1Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները,իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2և 5.3կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 3աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության առավելագույն գինը կազմում է 1 400 000 (մեկ միլիոն չորս հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն վճարելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և արտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի որոշում կայացնել պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդորում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնական է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն	«Մատակարար ԱՄՎ» ՍՊԸ
ք. Երևան, Դավիթաշեն 4, Ա.Միկոյան փող. 109/8	ք. Երևան, Լ.Լիսինյան 8 «Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	Հ/Հ 2470101224450010
Հ/Հ 900011019313	ՀՎՀՀ 00454158
ՀՎՀՀ 00153247	
Աշխատակազմի ղեկավար՝	Տնօրեն՝
_____Գ.Հարությունյան	_____Վ.Թումասյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N1
11.05.2018թ. կնքված
ԳՀՄՁԲ-ԱԻՆ-18/26ծ ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության						Մատուցման	
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը /ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	ժամկետը**
1.	50311120/1	Տես Հավելված 11	ՀՀ դրամ	Պայմանագիրը կնքվելու է ընդհանուր առավելագույն գնով	Պատվիրատուի կողմից ներկայացվող պահանջի հիման վրա	Ծառայությունը մատուցվում է ՀՀ քաղաք Երևան Դավթաշեն 4.Ա.Միկոյան 109/8	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց մինչև 15.12.2018թ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի Հանրապետության
արտակարգ իրավիճակների
նախարարություն
ք. Երևան, Դավթաշեն 4.Ա.Միկոյան փող. 109/8
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011019313
ՀՎՀՀ 00153247
Աշխատակազմի ղեկավար՝

_____ Հ.Հայրապետյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Մատակարար.ԱՄԿ»ՍՊԸ

ք.Երևան, Լ.Լիսինյան 8
«Արդշինբանկ»ՓԲԸ

Հ/Հ 2470101224450010
ՀՎՀՀ 00454158

Տնօրեն՝

_____ Վ.Թումասյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N1.1
11.05 2018թ. կնքված
ԳՀՄՔԲ-ԱԻՆ-18/26 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ
ՍԱՐՔԵՐԻ ԵՎ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ՀՀ	Ներառվող ծառայությունների անվանում	Միավորի գին /ՀՀ դրամ/			
		1-ին նչ ափաբ ածին Պատճենահանող և բազմաֆունկցիոնալ տպիչ սարքերի վերանորոգումներառյալ պահեստամասերի փոխարինման, քաթրիջների լիցքավորում և տեխնիկական սպասարկման ծառայություններ:			
		Samsung GP-MLT D104S Կամ համարժեք	Canon FX 10, Կամ համարժեք	HP LG 1320, HP color Laser Jet Pro M252 dw, Կամ համարժեք	MMC GT 5949A, GT-CEP26 Canon LBP 3200, GT-C2612A/FX9/FX10 HP LJ1, GT-CB435A/CB436A/CE285AHP,
1	2	3	4	5	6
	*Վերանորոգում ներառյալ պահեստամասեր, նորով փոխարինում,անհրաժեշտության դեպքում փոխարինում նոր քաթրիջով: Լիցքավորում՝ յուրաքանչյուր քաթրիջի համար մեկ ամսվա կտրվածքով առավելագույնը 3 անգամ, նաև տեխնիկական սպասարկում:				
1	Քաթրիջի լիցքավորում երաշխիք՝ նվազագույնը 1400 էջ՝ փոխարինման պահից:	4000	4000	10	4000
2	Թերմոթաղանթ (ներառյալ վառարանի թերմոթաղանթը): երաշխիք՝ նվազագույնը 20 000 - 25 000 էջ՝ փոխարինման պահից:	10	10	10	10
3	Սնուցման բլոկ	10	10	10	10
4	Մայրական սալիկ	10	10	10	10
5	Լազեր	10	10	10	10
6	Քաշողհարթակ	10	10	10	10
7	Թմբուկ (ներառյալ թմբուկը) երաշխիք՝ նվազագույնը 10 000 էջ՝ փոխարինման պահից:	10	10	10	10
8	Մագնիսական լիսեռ (ներառյալ մագնիսական լիսերը) երաշխիք՝ նվազագույնը 20 000 էջ՝ փոխարինման պահից:	10	10	10	10
9	Կարատրոնի (ներառյալ կարատրոնը): երաշխիք՝ նվազագույնը 20 000 էջ՝ փոխարինման պահից:	10	10	10	10

	Մաքրող դանակի	10	10	10	10
1	Թղթի քաշող հարթակ	10	10	10	10

***Ծառայության մատուցման ժամկետը**

Ծառայությունը մատուցվում է Պատվիրատուի կողմից ներկայացվող պահանջի հիման վրա: Կատարողը Պատվիրատուի պահանջի դեպքում մեկ օրվա ընթացքում ներկայանում է Պատվիրատուին՝համապատասխան ցուցումներ ստանալու համար: Կատարողը Ծառայությունը մատուցում է Պատվիրատուից ստացած ցուցումների հաջորդ աշխատանքային օրվանից հաշված առավելագույնը 2աշխատանքային օրվաընթացքում:

***Կատարողը սեփական միջոցների հաշվին իրականացնում է սպասարկման կարիք ունեցող սարքերի, սարքավորումների տեղափոխումը և տվերադարձը,ք.Երևան Ա.Միկոյան 109/8հասցեով /ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն/:**

***Ծառայության մատուցման գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը: *Փոխարինվող պահեստամասերը պետք է լինեն չօգտագործված:**

Այն բոլոր մասերը որոնք ոչ թե պետք է վերնորոգել,այլ փոխարինել պետք է լինեն նոր:

Այլ պայմաններ

Գնմանհայտով ներկայացված գնման առարկան բաղկացած է 1 չափաբաժնից և ներկայացված է մի քանի ծառայությունների համախմբով,որն էլ ենթադրում է,որ մասնակցի կողմից ներկայացվող չափաբաժնի գնայինառաջարկը պետք է ներառի տվյալ չափաբաժնով ներկայացված ծառայությունների համար առաջարկվող գների հանրագումարը:

1.*Գնայինառաջարկները պետք է ներկայացվեն համաձայն տեխնիկական բնութագրով բոլոր ծառայությունների համար ներկայացված միավորի գնով:
2.*Դաղթող մասնակիցը կորոշվի բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից նվազագույն գնայինառաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով,ընդհանուր գնով:
3.*Համապատասխան ստորաբաժանման մասնագետը իրավունք ունի ներգրավել ծառայության մատուցման ընթացքում վերանորոգման և սպասարկման ծառայությանը:

Երաշխիքներ

Ծառայությունների համար ճամիս

Իրականացվելիք նորոգումների և տեխնիկական սպասարկումների ընթացակարգի համառոտնկարագիրը

1. Սարքերի և սարքավորումների նորոգման և տեխնիկական սպասարկման համար Կատարողը պարտավոր է պատվիրատուին նշված ժամկետում անմիջապես իրականացնել պրոֆիլակտիկա անհրաժեշտ քանդման,ապամոնտաժման,զննման և գնահատման աշխատանքներ:
2. Տուրաքանչյուր սարքի սպասարկման և նորոգման համար պատվիրատուի պահանջով Կատարողի կողմից կազմվում,կնքվում և պատվիրատուին է ներկայացվում նախնական զննման և գնահատման ակտ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն
ք. Երևան,Դավիթաշեն 4,Ա.Միկոյան փող.109/8
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011010112[illegible]
ՀՎՀՀ 00[illegible]
Աշխատակազմի ղեկավար՝

_____Հ.Գ[illegible]յան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Մատակարար.ԱՄԿ»ՍՊԸ

ք.Երևան,Լ.Լիսինյան 8
«Արդշինբանկ»ՓԲԸ

Հ/Հ 2470101224450010
ՀՎՀՀ 00454158

Տնօրեն՝

_____Վ.Թ[illegible]
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N2
«11» 05 2018թ. կնքված
ԳՀՇՁԲ-ԱԻՆ-18/26 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՑԱ*

ՀՀ դրամ

Ծառայության													
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների միասնական նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1.	50311120/1	համակարգչային սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություններ	-	-	-	-	490000	490000	840000	840000	840000	1400000	1400000	1400000	1400000

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ազգային արժույթով:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի Հանրապետության
արտակարգ իրավիճակների
նախարարություն
ք. Երևան, Դավիթաշեն 4/Ա Մինսկոյան
փող. 109/8
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական
վարչություն
Հ/Հ 900011019313
ՀՎՀՀ 00153247
Աշխատակազմի ղեկավար՝

Ա.Ստեփանյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Մատակարար ԱՄՎ» ՍՊԸ
ք.Երևան, Լ.Լիսինյան 8
«Արդշինբանկ» ՓԲԸ

Հ/Հ 2470101224450010
ՀՎՀՀ 00454158

Տնօրեն՝

Վ.Թումասյան
/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N3
11.05.2018թ. կնքված
ԳՀՇՁԲ-ԱԻՆ-18/26 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
հվհհ _____ .	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄԴՐԱՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «___»_____»20թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » » 20 թ.դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	Մատուցված ծառայությունների քանակական ցուցանիշը		Կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը/ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն,անուն	ազգանուն,անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N3
«11.05» 2018թ. կնքված
ԳՀԾՁԲ-ԱԻՆ-18/26ծ ածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու
վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____-ին կնքված N_____
պայմանագրի համարը պայմանագրի ենթամանամասնիվը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց **Ընդունեց**

հայտը նախագծածներկայացուցիչ՝

_____ _____
ազգանուն,անուն ազգանուն,անուն

_____ _____
ստորագրություն ստորագրություն